Ինձ դժուար է նկարագրել, պէտք է աչքով տեսնել, որ հասկանալ, թէ որքան ճարպիկ, որքան արագաշարժ եւ որքան դեւի պէս խորամանկ է քուրդը, երբ նա հեծած է ձիու վրայ: Ձին ամենայն արագութեամբ վազելու ժամանակ՝ քուրդը ճախարակի նման պտոյտւում է նրա ամէն կողմերը: Երբեմն տեսնում ես, նա մի թռիչք գործեց, ձիու պարանոցովն անցաւ, եւ կրկին նստեց թամբի վրայ: Երբեմն տեսնում ես, նա իր ոտքերը ասպանդակի մէջ թողնելով, կռացաւ, եւ ձեռքով գետնից հաւաքում է քար, փայտ կամ իր ձգած նիզակը, եւ նրանցով կարկտի նման մինը միւսի ետեւից ռմբակոծում է իր հակառակորդին, որին հալածում է: Բայց ձին նոյն միջոցում արագ վազում է առանց կանգնելու: Եւ գլխաւորը, որ միջոց է տալիս քրդին պատերազմելու ձիու վրայ, այն է, որ նրա ձեռքերն ամենեւին չեն զբաղոած իր նժոյգի սանձը կառավարելով. նա սանձը բոլորովին բաց է թողնում, եւ իր ծնկների զանազան շարժմունքները բաւական են ցոյց տալու ձիուն իր ընթացքի ուղղութիւնը: Եւ խելացի անասունը այն աստիճան վարժոած է, որ բոլորը հասկանում է, եւ համարեա գուշակում է իր տիրոջ միտքը: Այսպիսով ձիաւորի ձեռքերն ազատ են մնում, եւ նա կարողանում է իր ձին դէպի զանազան կողմերը պտտացնել եւ միեւնոյն ժամանակ գործածել իր զէնքերը, — հրացան արձակել, դարձեալ լեցնել, դարձեալ արձակել, թէեւ ձին անդադար շարժողութեան մէջ է: Մի խօսքով, ձին եւ քուրդը գործում են, որպէս մի ամբողջ մարմին, որին մի կամք եւ մի նպատակ է կառավարում:

Այսպէս ես տեսայ բէկի որդիներին, որոնք մի փոքրիկ ձիարշաւ կատարեցին այն դաշտում: Նրանք հրաւիրեցին ինձ եւս մասնակից լինել, բայց ես հրաժարոեցայ, որովհետեւ բոլորովին անվարժ էի, եւ ինձ խայտառակել չուզեցի:

Բայց ինձ բոլորովին զարմացրին նրանց ձիերը: Չափազանց լաւ կրթոած էին արշաւանքի համար: Քուրդն երբեք իր նժոյգը չէ տալիս ուրիշին հեծնելու, թէեւ նա իր եղբայրը լինէր, որովհետեւ նրանք երկուսը ծանօթ են միմեանց բնաւորութեանը. մի օտար մարդ կարող էր հակառակ վարոած լինել ձիու վարժութեանը եւ վայրենացնել նրան: Այս պատճառով առած է դարձել քրդերի մէջ ասել, թէ «Երկու բան չէ կարելի ուրիշին տալ հեծնելու համար, մէկը՝ կինը, միւսը ձին»:

Մեր որսորդութիւնը բաւականին յաջող անցաւ: Ես թէեւ ձիարշաւի մէջ ցոյց տոի իմ կատարեալ անկրթութիւնը, բայց որսորդութեան մէջ մի փոքր երեսս պարզացրի: Քրդերը, սովորած լինելով աւելի նիզակի, ատրճանակի եւ սրի կռիւներում, հրացան արձակելու եւ նպատակին դիպցնելու մէջ շատ վարժ չեն լինում: Ես քանիցս անգամ կարողացայ վայր ձգել օդի մէջ